





ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՉԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ



ԲԵՒԵՆԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՌՈՒՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Շար. տես էջ 157)

ԳԼՈՒԽ Ա

ԳԱՇՊՈՒՌՈՒՆ

(Luhjunini-Menuahinili)

Սնտի թագաւորներից առաջինը, որ մտել էր Երասխի հովիտը և թողել այնտեղ իւր աշխարհակալութեանց կոթողներն, Մե-

նուա էր¹ իշպուկնի որդին, որ ապրում էր Ը դարի սկզբում՝ նախ քան զԲրիստոս. յառաջ քան այս հիւսիսային աշխարհը միջամուխ լինելն և ամուր ոտքով այն տեղ հաստատուին, նա պիտի նուաճէր վանի և Երասխի հովտի մէջ եղած երկիրները: Դաշ-թէկէի արձանագրութենից քերտւում է, որ Մենուան իւր իշխանութեան տակ նուաճեց Մանանի երկիրը, որ վանի արեւմտեան կողմումն էր գտնուում, Ուրմիա լճի մօտ և տարածւում էր հեռու Հիւսիս գէպի Երասխը Մանանի երկիրը. և Մաննէացւոց ժողովուրդ.

է. Այս անունը մեզ յիշեցնում է Մ. Խորեանցու պատմութեան Մանաւագն.

Չ. Գուել է վ. Բերկը Ուրմիա լճի հարաւային ափերում:

դը (Ասորեստանցուց — *Mannai*) հանդէս են գալիս նաեւ իբրեւ հակառակորդներ Ասորեստանի աշխարհակալներին՝ սկսեալ Սալմանասար երկրորդից (1830 ա. նախ քան ըգ. Գրիստոս) մինչեւ Ասուրբանիպակ (սկիզբն է դարու նախ քան գրիստոս), ուստի կարելի է երթակացնել, թէ այս ժողովուրդն կենսունակ էր և ընդունակ իւր անկախութիւնը պաշտպանելու։ Մի այլ տէրութիւն, որ տարածուած էր Վանի լճից դէպ ի Հիւսիս և հաւանական է կարծել, թէ սահմանակից էր Մանանու, *Daiaeni*-ն էր բոտ Ասորեստանայց, և *Diakhini* բոտ Վանի արձանադրութեանց։ Երեսուն և վեց տողերից բաղկացած արձանադրութիւնն, որ Մենուան թողել է Դելի-Բարա գիւղում, Արզուսից դէպ ի արեւելեան—Հիւսիս, ոչ հեռու Երասխի աջ ափերից, Ռուսաց սահմաններից մօտ 40 վերստ հեռավորութեամբ, աւանդում է *Diakhini* աշխարհի նուաճման մասին և վկայում է՝ թէ Մենուան հասել էր մինչեւ Երասխի վերին հոսանքը, և բոլոր երկիրը Արզուսից մինչեւ Ուրմիա լճի արեւմտեան կողմէ՝ նորա իշխանութեան ներքոյ էր։

Շատ բնական է կարծել, որ Մենուա *Diakhini* երկրի նուաճումից յետոյ, հասնելով Երասխին այն տեղում, ուր գտնուում է վերոյիշեալ արձանադրութիւնը, փորձեց անցնել Ազրի-Տադի* շղթայից, որ անլրջեւ է կազմում արեւելեան Եփրատի և Երասխի մէջ։ Նա կանգնած էր Ալլարատեան նահանգի բնական գոնիքի առաջ կամ հին Ուրարտու աշխարհի, որ անտարակոյս նորա դէպ ի Հիւսիս արշաւելու նպատակն էր։ Յառաջ ընթանալով Երասխի ափերով, նա չորս հինգ օրից յետոյ կարող էր հասնել Երեսանի գաղտնալայրը և գտնուել Մեծ Արարատի ստորոտում, ուր ներկայ ժամանակս զրտնւում են նորա այնտեղ թողած հետքերը։ Բայց եթէ Երասխին աջ ափը, Արարատի մօտեցնելու, նորա գլխաւոր նպատակն էր Երեսանի գաղտնալայրը արշաւելու, այն ժամանակ մեր զօգրած ճանապարհը կարող

է շատ երկար ու դժուարին երեւել։ Այդ ճանապարհը Վանից մինչեւ Դաշակունտ տարած ուղիղ գծից երեք անգամ աւելի երկար է։ Սակայն շատ հաւանական է ենթադրել, որ Մենուան միանգամ հասնելով Նարախին՝ դորա վերին հոսանքին, յառաջ շարժվեցաւ գետի ընթացքով, մասնաւորապէս պատճառաւ, որ Երասխի ձորը՝ մինչեւ Երեսանի գաղտնալայր մօտին՝ թէ և դժուարակողմ է, բայց այնու ամենայնիւ անցանելի է։ Այդ՝ որովհետեւ Դելի-Բարայից մինչեւ Դաշակունտ մենք չենք գտնում Մենուայի հետքերը, այդ հանգամանքը հարկադրում է մեզ որոնել ուրիշ աւելի կարճ ու յարմար ճանապարհներ դէպ ի Երեսանի գաղտնալայր։

Վանից դէպ ի Երեսանի գաղտնալայր տանող ճանապարհը սկսվում է Վանայ լճի հիւսիս—արեւելեան ափից ուղղակի դէպ ի հիւսիս կամ հիւսիս—արեւելք՝ Մեծ Արարատի ուղղութեամբ։ Նախ եւ յառաջ ճանապարհը անցնում է Բենդիմազու գետի ձորով, ապա ընթանում է Պայեզխի գաղտնով դէպ ի Չինգիլեան բարձունքը՝ Ազրի-Տադի վրայից այն տեղում, ուր այս շղթան միանում է Մեծ Արարատի հետ։ Դուրս գալով հովիտ, ճանապարհը ներկայումս դիմում է ի վիզի, ուստի 18 վերստ է դէպ ի արեւելք մինչեւ Դաշակունտ։

Ներկայ ժամանակս դա չորս օրուայ ճանապարհ է, և յարմար է նաեւ կառքերի համար։ Դժուար է ենթադրել, որ այս ճանապարհը յայտնի չլինէր ի հնումն, քանի որ պահանջում էր համարեալ թէ Մեծ Արարատի վրայից, որի գոնեւ չէին կարող յայտնի չլինել հին աշխարհիկ։ Այդ բանում մեզ համոզում է այն հանգամանքը, որ Պայեզխի, ինչպէս երեւցաւ Պ. ի վանդուսկու 1894 թ. կատարած հետազոտութիւններից, տակաւին Վանի թագաւորների օրերում աւարացրած քաղաքի դիրք ունէր։ Պայեզխի ժայռերի վրայ նորա գտած քանդակները, որոնք զարդարում են ժայռերի մէջ փորած անձանիքի մուտքը, անշուշտ Ուրարտեան ծագումից են և պարզապէս վկայում են, որ յիշեալ ճանապարհը ոչ միայն յայտնի էր Վանի թագաւորներին, այլ և ամրացրած էր

* Հսւս 2. Ալեշանի « Հայկական լերինք » աշ. Ալարատ։

նոցա ջանիւր: Պայեզդիտը այն ժամանակն էլ կարող էր բանալիք լինել այրարատեան դռներէ, և ընդ սմին, որպէս և այժմ պահպանել մեծ ճանապարհը արեւելքից արեւմուտք դէպ ի մեծ գետերի աղբիւնները: Այս ճանապարհով, ինչպէս մենք տեսանք, Մեհուան հասնում էր մինչեւ Դիւի—Բարա Արդոււմի մօտ. իսկ նորա յաջորդ Արդիշտի առաջինը անցաւ աւելի առաջ կարս—չայի հովիտը:

Այն աշխարհը, ուր միջամուտ եղաւ Մեհուան, մտնելով Երասխի հովիտը, Դաշպուտունի արձանագրութեան վրայ կոչւում է *Eriduahē* կամ *Eriduahēni* = Էրիդուահի, Էրիդուահիսի, իսկ դորա մայրաքաղաքը *Luhēwunini* = Լուհիւսինիս: Անցնելը այժմ արձանագրութիւններին և տեսնենք՝ թէ նոքա քննչ են վկայում:

Այն Դաշպուտունի առաջին բեւեռագիր արձանագրութեան թարգմանութիւնը. «Խալդի (չատուածին) ես աղօթում էի, կարող տիրապետողին, որ տուաւ երկիրն Էրիդուահի, որ տուաւ քաղաքն Լուհիւսինիս ընծայ Մեհուային: Խալդի տուողին, Խալդի հզօրին, պարգեւողին, ողորմած Խալդիացւոց ես աղօթում էի Մեհուայի՝ Իշպուկիու ողուն համար: Ես մօտեցայ ընծաներով Խալդիին: Մեհուա ասում է՝ ես եկայ երկիրն Էրիդուահի, քաղաքն Լուհիւսինիս, քաղաքն արքայական»:

այց ելաւ Խալդի Մեհուային, իշպուկիու ողուն: Ես տիրապետեցի քաղաքին Լուհիւսինիս, ես փոխեցի քաղաքի Լուհիւսինիս նորա անունը: Մեհուա ասում է՝ ով այս արձանագրութիւնը կ'հեռացնէ, ով կը ջնջէ անունը, ով երկիր դորան կը կործանէ, ով մի ուրիշը (անձն) կը սեպհակալանէ՝ ես քաղաքն Լուհիւսինիս նուաճեցի, — այդպիսի մարդուն Խալդի, Թէիշթա, Արդիւի չատուածները, նորա աշխարայ, անունն նորա, ընտանիքը նորա քաղաքն նորա կրակին, ջրին կ'մատենն»:

Դաշպուտունի երկրորդ արձանագրութիւնը աւելի եւ քայքայուած է և թերի.

«Ողորմած Խալդիացւոց Մեհուա Իրկուանի երկիրը քաղաքը աշխարհին Լուհիւսինին... այս Մեհուա վերականգնելուց զինի դռները

Խալդիսիլի արքունիքն կործանուած Մեհուա ասում է՝ վերանորոգեցի (2) շինեցի Մեհուա (որդի) Իշպուկիու...»:

Դաշպուտունի երրորդ արձանագրութիւնը այն է. «Չատուածին Խալդի, տիրոջ այս տունն քանդուած Մեհուա որդի Իշպուկիու վերականգնեց, արքունիքը վերականգնեց կործանուած, շինեց, Մեհուայի տեղի բնակութեան կոչեց, — մեծ Խալդիացւոց, Մեհուային, ողուն Իշպուկիու, արքային հզօրին, արքային երկրի Բիայնայի (վանի), բնակողին քաղաքում Տուշպա»: Բոլոր վերջիշեալ թարգմանութեանց մէջ մենք ճշդի պահպանեցինք անպաճառ բնագրի բառերի դասաւորութիւնը, որպէս զի կարողանանք պարզ գտափար տալ ընթերցողին բեւեռագիր արձանագրութիւնների մասին: Դարձեալ՝ առաջին երկու արձանագրութիւններում յիշուած է Լուհիւսինի քաղաքը, որի անունը Մեհուա թագաւորը փոխելով իւր երրորդ արձանագրութեան մէջ կոչում է Մեհուահիւիլի (այսինքն տեղի բնակութեան Մեհուայի):

Արդեօք ո՞ր տեղ պէտք է որոնել այս քաղաքի տեղը, հարցնում է ռուս գիտնական Պ. Նիկոլսկին և ապա շարունակում է. «Նախ և յառաջ մեր ուշագրութիւնը զբաւեցին Արարատի այն առաջաւոր բլուրները, որոնց մօտակայքում գտնուում է Դաշպուտունի առաջին բեւեռագիր արձանագրութիւնը, ուր անագում է Լուհիւսինի քաղաքի նուաճման մասին ի մօտայի հետազօտելով այդ բլուրները, մենք ծանոթացանք թէ զորա մեծ նշանակութիւն ունեցած են Ուրարտեան տիրապետութեան ժամանակ: Լեռնաշղթայի ամբողջ մասն, որ եռանկիւնի ձևով դուրս է ցցուած գէպ ի Երեւանի դաշտավայրը, այն, երեւ է, որ ի հնումն իսխա մայրաքաղաք է Լեբին վերջին ծայրը, դարձած Դաշպուտունի կալմի, առաջին արձանագրութեան մօտ, երկայնաձիգ ըլլի նման է. նորա գաղթի վրայ գտնուում են ամբողջեանց հեռքեր, որ մենք հետազօտեցինք պեղումներ անելով: Մենք գիտաւորութիւն չունինք երկար խօսելու կատարած պեղումների արդասեանց մասին, ռակայն այսքանս կ'ասենք,

որ մեր առաջ խոր գետնի մէջ մերկացան շինուածոց հիմունքը, մակարդակը, նիւթերը, որոնց դասաւորելու ու կանգնելու եղանակը յիշեցնում է մեզ Արմաւիր բլրի շէնքերն: Պատերի կոփածոյ քարերը նոյն տեսակիցն են, ինչ որ երկրորդ արձանագրութեան քարն, որ գտնուած է տեւրակների մէջ, հսկում, Դաշպուտունի մօտ. բաց ի դորանից յիշեալ շինուածոց քարերի վրայ, որպէս և երկրորդ արձանագրութեան և Արմաւիր քարերի մի կողմում՝ նկատուում են փոսերը, գուցէ գմբաւները զետեղելու համար: Ինչ և իցէ ճարտարապետութեան հետքերը զոցա վրայ անուրանալի են Ուրարտեան ժամանակից:

Բայց ամենամօծ և նշանաւոր ամրութիւնը Արարատի դաշպուտունեան սարաւանդի վրայ գտնուած է՝ նորա արեւելեան կողմում, որ նայում է դէպ ի Պուլազ-պաշի լիճը: Արարատի բլուրները լճի մօտ շատ բարձր չեն, բայց լճի ամենայայն տեղերի մօտ կայ մի բարձր բլուր, որի վրայ ելնելով մենք նկատեցինք, որ մի ահագին ամրոցի պատերի մէջն ենք գտնուում, որ ստեղծել է ինքն ընուծինը, ուր նշմարուում են նաեւ մարդկային աշխատանքի մեծամեծ հետքեր: Բլուրը շրջանի ձեւ ունի, որի տրամագիծը հասասար է մէկ վերստին (այսինքն 1500 կանգուն). մեծ ծործորը համարեա ամենայն կողմից անջրպետոււմ է դորան Արարատի միւս բլուրներից, որոնց մէջ տեղն է բնկնում նա: Բլրի կատարը չորս կողմից շրջապատոււմ է ըստ մեծի մասին անտաշ ահագին քարերի շարքով, բայց մի քանի տեղերում երեւում են պարիսպների կոփածոյ քարերից: Պարիսպների ներսում նկատելի են կործանուած աշտարակների մնացորդը. անհարթ ձողի երեսին, որ ծածկուած է մասր քարերի թանձր խաւերով, անկասկած, մնացած պիտի լինին ճարտարապետական շէնքերի հետքեր: Դուրս գալով ծործորից դէպ ի Պուլազ-պաշի՝ մենք նկատեցինք կանոնաւոր, կրկնաւոր և բաւականին լայն վերելքի հետքեր. ճանապարհը մի ժամանակ զեղեցիկ կերպով սալայատաւորուած է եղել և պատուաւորներով պաշտպանուած: Իսկ ինչ որ վերաբերում է ծործորին, պէտք է նկատել, որ դա ամրոցի յե-

տեւում ճիւղաւորվելով տառնում է զանազան կողմեր. հասկանալի է, որ այդ ծործորների միջնորդովեամբ հնարաւոր էր հաղորդակցել միւս ամրոցների հետ՝ որոնք օտարաւանդի միւս կողմումն են, ուր որ առաջին դաշպուտունեան արձանագրութիւնն է գտնուում:

Հանգամանքները ներեցին մեզ այստեղ ևս պեղումներ անել, ինչպէս որ Դաշպուտունում, ասում է Պ. Նիկոլսկին, վասն զի նախ՝ այս տեւրակները հետու են գիւղերից, երկրորդ՝ որ զուրկ են կենսական յարմարութիւններից, և բաց ի դորանից, դժուար է կազմել այստեղ մի ժամանակաւոր գաղութականութիւն. դրա համար հարկաւոր է մի առանձին մեծածախս ձեռնարկութիւն: Սակայն ամրոցը իւր մեծութեամբ և պատկառելի շէնքով գերազանցում է բոլոր մեր տեսած ամրոցները Երասխի հովտում: Մենք, յայտնի բան է, գրաւոր յիշատակարաններ չունինք ապացուցանելու՝ թէ ամրոցի պարիսպները Ուրարտեան ժամանակներիցն են, վասն զի այս վայրերում առկալին չեն գրեւորուած բեւեռագիր արձանագրութիւններ, սակայն յօգուտ Ուրարտեան ծագման վկայում են քարերի տաշելու ձեւը և պարիսպների կանգնելու եղանակն, որ նոյնն են, ինչ որ տեսնոււմ ենք Արմաւրում:

Բայց եթէ Դաշպուտունին կից բոլոր արհեստական ամրութիւններն Ուրարտեան ժամանակներից վերագրելու լինէին, դարձեալ գժուար կ'լինէր յարմարացնել զոցա Լուհիու, Նինի քաղաքի դրից. այս ամրութիւններից մէկն կարող էր շուտով քաղաքիս միջնաբերդն լինել, չէ թէ բուն քաղաքը: Վերջինս իբրեւ բնականութեան տեղի, հաւանական է որ լեռներում չէր, որոնք անյարմար են կեցութեան համար, այլ հովտումն էր և յատկապէս արձանագրութեան մօտակայքում, այն բլրի սարդոտում, ուր որ մենք պեղումներ կատարեցինք. իսկ այդ բլրի վրայ եղած ամրոցը կարող էր քաղաքի միջնաբերդն լինել: Սակայն հովտի մի մասն, որ մօտենում է յիշեալ բլրին աւարձանագրութեան, ներկայումս հերկուած է և այնտեղ ցանուած են ցորեան և մարսակ. հնութեան հետքեր չեն

մնացել. երբեմն գուցէ կային, բայց մար-
դուս կուլտուրական ազդեցութեան ներքոյ
խալած անհետացել են: Շատ կարող է լինել,
որ քաղաքը մի այլ տեղումն էր. և արդարեւ,
Դաշպուտունից երեք, վերստ հեռու, նոյն
ճանապարհի վրայ մենք գտանք հարթ հա-
ւասար գետին (Դաշպուտունի և Հասանհուի
միջում), բնագրական տարածութեան վրայ
հին բնակութեանց մնացորդներ, որոնք շա-
րունակում էին մինչև մեծ Արարատ: Ըն-
տալարհի մօտ հողին հաւասար կարելի է
տեսնել մի շարք կոփածոյ քարեր, որոնք,
անկասկած, հնագոյն շէնքերի հիմունքն են:
Տեղական բնակիչները չհաղորդեցին մեզ ոչ
անորոշ տեղեկութիւններ, ոչ էլ աւանդու-
թիւններ այդ հին ժամանակներից մուտցուած
և գետնին հաւասարած բնակութեան վայրե-
րի մասին, այլ անպարտ կրկնում էին, թէ
Պա Յուսկերան է, որ ակներեւ է, որ յար-
մարեցրած է այս տեղերին Մ. Խորենացոյ
Պատմութիւնից (Գիրք Ա. գլ. ԺԲ):

Բայց թէ սոյն տեղում հնարաւոր է ո-
րոնք էւելիւնինի քաղաքը, զորա մասին
վկայում է երկրորդ արձանագրութեան այս
խոյ տեղում գտնուիլն, ինչպէս միաբերան
ասում էին տեղական բնակիչները. Յամե-
նայն գետ, եթէ այժմ ճշգիւ չենք կարող
ցոյց տալ յիշեալ քաղաքի տեղն, այնու ա-
մենայնիւ կասկած չէ կարող լինել, որ այս
վայրերը Ուրարտեան տիրապետութեան ժա-
մանակը շատ նշանաւոր դեր կատարած են:
Անմիջապէս արձանագրութեան ամասկայքում
մենք գտնում ենք մի շարք մոտեմիւններ,
որոնց մէկն կրում է իւր վրայ Ուրարտեան
ժազման ակներեւ կնիքը. այդ խորոցները
թոռով առ այժմ երեք են և յարնչութիւն
ունենին քաղաքի հետ հովտում, որ անշա-
տուած էր նոցանից Պուլաք-պաշի լճով:
Այս ամենը միասին առած, ամրոցները լեռ-
ներում, քաղաքը հովտում, նոցա անշատող
լիճն, կազմում էին մի ամբողջութիւն, կոչ-
ուսւրական և ռազմագոյտական մի շատ նշա-
նաւոր կենդրոն: Հայոց ոչ գրաւոր, ոչ էլ
բանաւոր (քերանացի) աւանդութեանց մէջ
մենք չգտանք ոչինչ արձագանք կամ ակն-
արկներ այս յիշատակարանների անցելոյն

մասին, և միայն այս աւերակներում գտնուած
երեք բեւեռագիր արձանագրութիւնները լոյս
են տաւում այն նշանակութեան վրայ, որ
յիշեալ տեղն ունէր ութ դար Քրիստոսից
առաջ, այն է, թէ դա վանի թագաւորների
համար բանայի էր Երեսնանոս դաշտավայրի,
թէ այստեղ առաջին անգամ հաստատուն
ոտքով կանգնեց վանի թագաւորներից ա-
ռաջինն, որ մտել էր Երասխի հովիտը՝ Մե-
նուան. այս վայրերի նուանումն թեմեւա-
ցնում էր ու ապահով կացուցանում նորա
յաջորդների համար և մանաւանդ անմիջա-
կան յաջորդ Արգիշտի առաջինի համար,
Երեսնանի ամբողջ զաշտավայրի և մօտակայ
Արաքսի ու Գեօկ-չայի բարձանց տիրա-
պետութիւնը: Կանոնաւոր և բարձր պեղումնե-
րի շնորհիւ այս աւերակներում հնարաւոր
կ'լինէր ձեռք բերել աւելի շոշափելի ու նիւ-
թական փաստեր այդ հին ժամանակներից,
որոնք կը պարզէին մեր առաջև արձանա-
գրութիւնների յարնչութիւնը շինուածոց հետ:

ԳԼՈՒԽ Բ

Ա Ր Մ Ա Ի Բ Բ

(Argistihinili)

Արմաւիրը, իւր անուամբ ու յիշողութիւն-
ներով, դրում է պ. Նիկիւրկի, մինչև ցայժմ
գոտ ճայկական էր համարւում՝ Մ. Խո-
րենացոյ վկայութեամբ, նա շինուեցաւ Հայկի
Թոփ, Հայաստանի նահապետ, Արմայիսի
ձեռքով, որ Արմենակի որդին էր և իւր հիմ-
նադրի անուամբ կոչուեցաւ Արմաւիր: «Ար-
մայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ
ոստոյ միոյ առ եզերք գետոյն» և անուանէ
զնա յիւր տունն Արմաւիր. և գտնուն (գե-
տոյն) Թոփին իւրոյ Արաստոյ՝ Երասխի. Բե-
ստ. Հայոց Մ. Խոր. Գիրք Ա. գլ. ԺԲ):
Այսպէս, որեմն, Արմաւիր հիմնարկութիւնը,
ըստ Հայոց աւանդութեանց, Ասորեստանայ
Թագուհի՝ առասպելական Շամիրամից առաջ
էր և տեղի ունեցաւ 2000 տարի նախ քան

Քրիստոսի ծնունդն: Այս քաղաքի ծագման մասին յերկրած առասպելական գրոյցների բնատուրութիւնը ապացուցանում է, թէ նորա հիմնարկութեան իրական պատմութիւնը Մովսիսի խորենացւոյ օրերում միանգամայն մուսուլմանական է, և անուան բուն նշանակութիւնը (այսինքն բառազննութիւնը) յայտնի չէր: Ըստ հաւանական է ենթադրել, որ Արմա-յիսի անունը ծագում է Արմաւրից*, և ոչ թէ ընդհակառակն այդինքն Արմաւիրը Արմայի-սից:

Առաջին, ստոյգ պատմական տեղեկու-թիւն Արմաւրի մասին, իբրեւ Հայաստանի մայրաքաղաքի, մենք հանդիպում ենք նոյն Մ. Խորենացւոյ գրքում արդէն Քրիստոսից յետոյ. այն է 79-րդ տարին Երուանդ Թա-գաւորը իւր արքայանիստը Արմաւրից փոխա-դրեց Երուանդաշատ, ուր Արփա-շապը (Ա-խուրեանը) թափւում է Երասխի մէջ և այդ իսկ ժամանակից սկսւում է քաղաքի ան-կումն (Փիթը Բ. գլ. 13): Ինչ որ կարելի էր Արմաւրից տանել, տեղափոխվեցաւ նոր մայր-քաղաքը Երուանդաշատ, բացի սակայն կուղերից, որ տարան ու դեռեղեցին մի այլ քաղաքում՝ Բազարանում, շինուած յատուկ այդ նպատակի համար, ոչ հեռու առաջից: Երուանդի յաջորդ Արտաշէս շինեց նոր մայրաքաղաք Արտաշատն, «ուր խառ-նին Երասխ և Մեծամոր» (Փիթը Բ. գլ. 10) և իւր կարգին տարաւ Երուանդաշատից բո-լոր այն իրեղէնները, որ բերուած էին Ար-մաւրից: Իւր պատմութեան ընթացքում Մ. Խորենացին դարձեալ մի անգամ յիշում է Արմաւրի մասին, ուր Արշակ «կոչեալ առ ինքն ի լքեալ արքունիսն Արմաւիր իբր զաղ-գականսիւր ... հրամայեաց կատարել» (Փիթը Գ. գլ. 13):

Այսպէս փսքը ի շատէ պատմական տեղեկութիւններ Արմաւրի մասին իբր Հայաս-տանի մայրաքաղաքի վերաբերում են այն ժամանակին, երբ նա լքեալ դրութեան մէջ

էր և կորցրել էր իւր քաղաքական նշանա-կութիւնը սկսեալ առաջին դարու երկրորդ կիսից: Թէ ի՞նչ էր նա աւելի Հին ժամա-նակ, մենք ճշգիւ չգիտենք. բայց նորա բուն գոյութիւնը հնագոյն ժամանակ անհերքելի է. յօդուտ դորա վկայում են ոչ միայն առասպելական հուշիւր, որով քաղաքը օժ-տուած է Հայոց յետին ժամանակների աւանդութեանց մէջ, այլ և զուտ պատմական ակնարկութիւններն: Այսպէս՝ Պտղոմէոսը իւր աշխարհագրութեան կէրում յիշում է *Ar-mauria* քաղաքը որ գտնուում էր Հայաստա-նի կենդրոնում (Geogr. lib. V. cap. 13): Մետաբոկոյս, այդ *Armauria* նոյն է մեր Արմաւրի հետ: Այստեղից հաւանական է կարծել, որ Մ. Խորենացւոյ այն զրոյցը, ուր յիշուած է թէ Պարթեաց արքայ Արշակ Զ Միհրդատ Ա եկել է Արմաւիրն այցելելու (160—136 նախ քան զՔրիստոս), հիմնուած է պատմական աւանդութեան վրայ: Այստեղ, Հայաստանի կենդրոնում, նա հաւաքում է բոլոր աշխարհից զօրք և արշաւում է* դէպ ի հելլասոյին արեւմուտք մինչև Պոնտոս: Նորա եղբայր Վաղարշակը Հայաստանի կառավարիչ կարգուած, Պարթեական հարս-տութեան հիմնադիր դառնալով Հայաստա-նում, Արմաւրում մեհեան է շինում, ուր հաստատում է արեգական, լուսնի և նախ-նեաց անդրիքը (Փիթը Բ. գլ. 1): Սակայն Պարթեական հարստութեան թագաւորների արքունիքն Արմաւրում չէր, այլ աւելի հա-րաւ էր Մոծնում: Արմաւիրը երբ Հայաս-տանի մայրաքաղաքն դարձաւ յատկապէս, մենք չգիտենք. բայց հաւանական է, որ դեռ եւս Երուանդի նախորդների ժամանակ:

Չմիանալով այն աղբիւրները, ուստի Մ. Խորենացին քաղել է Հայաստանի՝ նախ քան զՔրիստոս՝ հնագոյն պատմութեան վերաբե-րեալ տեղեկութիւնները և միջոց չունենալով ստուգելու այն, մենք չենք կարող երաշխա-ւոր լինել նորա աւանդած իրողութեանց ճշը-

* Ափսոս որ ուսւ գիտնականը չէ բացատրուած թէ լեզուագիտական որ կանոններին համաձայն Արմաւիր անունը դարձել է Արմայիս: Երան. Թարգ:

* Այս արշաւանքը Մ. Խորենացին վերագրում է Վաղարշակին, չէ թէ Արշակ-Միհրդատին: Երան. Թարգ:

մարտութեանը. սակայն հաւատի ենք, որ համաձայն այդ տեղեկութիւններին, նախաքրիստոնէական դարերում Արմաւիրը Հայաստանի մայրաքաղաքը չէր, վասն զի Արշակունի հարստութեան թագաւորները նրստում էին Մծրնում, հիւսիսային Միջագետքում: Բաց ի դորանից՝ Արմաւիրը չէր կարող այն ժամանակները պարթեական հարստութեան մայրաքաղաքն լինել, վասն զի նա շատ հեռու էր Պարթեաց տիրապետութեան կենդրոնից: Միայն Երուսաղէմի փոքր ինչ առաջ նա թագաւորական հարստութեան արքայանիստ դարձաւ կամ, բառիս բուն նշանակութեամբ, մայրաքաղաք:

Արդ՝ ինչպէս պէտք է բացատրել այն փառահեղ հռչակը, որ Հայոց աւանդութիւնը վերագրում է Արմաւրին, համարելով դորան Հայաստանի հնագոյն մայրաքաղաքը, հիմար՝ Փռած 2000 տարի Քրիստոսից առաջ: Եթէ ի նկատի առնուիք, որ Հայոց իրանական ցեղն չէր կարող երեւել Եփրատի ափերում է՛րբ դարուց առաջ նախ քան զՔրիստոս և իւր գալուց զկնի հաստատուել այնպիսի հեռուոր տեղում, ինչպիսի Երասխի հովիտն է, ոչ էլ ստեղծել այնտեղ իւր ազգային հարստութիւնը, պարթեականից առաջ, որ զուցէ բռնութեամբ էր մտցրած, Արշակունեաց կողմից, այն ժամանակ զիւրաւ կարելի է եզրակացնել, որ Արմաւրի հնութեան ու նորաբարձր նշանակութեան վերաբերեալ աւանդութիւնը՝ արմատանում է յիշատակարանների մէջ, որոնք մնացել են այս երկրի պատմութեան այն վրդ ժամանակից, երբ այստեղ բնակում էին զեռ եւս Ուրարտեան ցեղերը, որոնց զլիաւոր քաղաքական կենդրոնը Տուշպա (Վան) էր, իսկ տեղական կենդրոնն Արմաւիր էր: Տիրելով Արարատեանն նահանգին, նոքա (Հայերը), իրանց ցեղակից իրանական իշխանների ազդեցութեան ներքոյ, ընդունեցին միանգամայն ուրիշ փոփոխութիւն, ջնջեցին իւրեանց նախորդներ յիշատակը նուաճեալ երկրում, և մեռացրին իրանց տալով նաեւ իւրեանց այստեղ հաստատուելու ժամանակամիջոցը, երկրիս բնիկներ համարեցին իրանց, նուաճեալ քաղաքների հիմարկութիւնը վերագրեցին իւրեանց առասպելական թագաւորներին, և նոցա առնուանց կորուսեալ նշանակութիւնը սկսեցին մեկնել իւրեանց լեզուաւ:

Որտեղ էլ լինին Արմաւրի աւերակները, որոնք նոցա մէջ, 2000 տարի Քրիստոսից առաջ եղած, Հայաստանի մայրաքաղաքի մնացորդը, անհարին է: Այս տեղերի պատմութեան մէջ, Հայոց տիրապետութեան օրերում, Արմաւիրը երբէք քաղաքական կեանքի նշանաւոր կենդրոն չէ եղել. նա Երուսաղէմից զերազանց չէր, և աւելի անշահեւ էր քան թէ Արտաշատը, Գառնին և Անին: Եւ որովհետեւ կարճ ժամանակ, ամենայն հաւանութեամբ, նա մայրաքաղաք էր Երուսաղէմից առաջ, այդ պատճառաւ նա չէր կարող շատ հռչակուել և ամենից առաջ ենթարկվեցաւ մոռացութեան և աւերակ դարձաւ: Միայն Մ. Խորենացույ արձանագրած աւանդութեանց շնորհիւ, նա ժողովրդի յիշողութեան մէջ զերազանցեց Հայաստանի բոլոր միւս քաղաքները: Բայց այդ աւանդութիւնները, ինչպէս ասացինք, ոչ այլ ինչ են, եթէ ոչ նախահայկական Ուրարտուի արձանագրութիւնը:

Այսուհետեւ վարմանալի չէ, որ, ընայնով փոքր ի շատէ նշանաւոր յիշատակների բացակայութեան Արմաւրից, աւանդութիւնը Արմաւրի մասին յարմարեցրած է մի յայտնի տեղին, որ մինչեւ այժմ ուրիշ անուն չունի եթէ ոչ Արմաւիր: Դա ոչ այնքան մեծ, երկայնաձիգ, 300 ոտնաչափ բարձրութեամբ մի բլուր է, Թափա—Տիպի և Գուրտուգույի գիւղերից զեւթ ի արեւմուտք, 25 վերստ հեռաւորութեամբ ս. Էջմիածնից զեւթ ի արեւմտեան հարաւ, և վերստ Երասխից զեւթ ի հիւսիս: Այս տեղի յարմարեցնեն Արմա բին՝ յենում է ոչ թէ որ եւիցէ աշխարհագրական կամ պատմական յիշատակարանների վրայ, այլ լոկ ազգային աւանդութեան վրայ, որ տարածուած է Երասխի հովիտի բոլոր քաղաքների մէջ: Այդ բանում եւ ինքս անձամբ համոզվեցայ: Բուն բլուրը բնակիչները կոչում են Արմաւիր, իսկ նորա մօտ եղած երկու գիւղերը Թափա—Տիպի և Գուրտուգույի համարում են հին քաղաքի տեղն, որի բերդն դրսում է բլրի վրայ: Այս համոզումը այն-

քան իւր արմատացած է յիշեալ գիւղերի բնակիչների գիտակցութեան մէջ, որ նոցա իրանց երբեմն արմախիցի են անուանում: Դորանով, ահա, բացատրվում է այն իրողութիւնը, որի վրայ ուշադրութիւն դարձրեց կոմս Ա. Ս. Ուլարովսկի*, թէ բոլոր նոյնագոյն աշխարհացոյցների և աշխարհագրական հրատարակութեանց մէջ Արմախիր միշտ սոյն տեղին են յատկացնում: Այստեղից արդէն պարզ է, թէ ինչու գիտնական ճանապարհորդները, զոր օրինակ Duhois de Monpéroux այնպիսի հետազոտմամբ բացատրում են քաղաքի տեղն: Արմախի բլրի գիւղը ինքն ըստ ինքեան շատ աչքի է ընկնում և կարծել է տալիս, որ ի հունցն յայտնող կարող էր լինել նշանաւոր քաղաքական և կուլտուրական կենդորն: Նա ճիշդ այն տափարակի միջոցն է, որ հիւսիսից ու հարաւից շրջապատուած է Արարատի և Արագածի լանջերով. իսկ արեւմտեցից ու արեւելից Բարձր Հայոց և Գեօկ-չայի լեռներով: Նորա տեսարանը երեւում է հեռուից և հազիւ թէ մենք զուրս ելանք ու. իջմիածնից, իսկոյն եւեթ նկատեցինք նորան: Նա երեւում է նոյնպէս Երասխի աջ ափերից, համարեա՝ հովտի վերջին ծայրից: Երեւով բլրի գագաթը, հանդիսականը զգում է, որ ինքն գտնւում է այն լայնատարած տափարակի կենդրոնում, որ չորս կողմից պատած է լեռներով. բլուրը իւր դիրքով թաղաւորում է տափարակի վրայ: Չնայելով տեղոյս կուլտուրայի ստոր աստիճանին ներկայումս, բլուրը շրջապատող վայրերը անշնչելի սպաւորութիւն են դրծում մարդու վրայ: Երասխի աօթ հովիտը, որ ըստ մեծի մասին մերի անապատ է, արեւից սուշորուած, այնքան նորա ճառագայթներից պլուրած, որ հազիւ կարելի է հասկանալ, թէ ինչպէս այնտեղ կարող են բնակիլ կենդանի արարածներ, այս տեղից, բլրի գագաթից մեզ երեւցաւ իբրեւ մի ճոխ այգի, չորս կող-

մը դիւղեր, որոնք թաղուած են ծառաստանների և պարտէզների մէջ, մեկուսի վեհ Արարատը և Արագածը: Այս բոլորը լուսաւորուած էր հաթաւային արեւի ճառագայթներով, կանանչում էր, փայլում էր և հրեմուանք էր աղղում հանդիսականին: Ի հընումն երկրիս տեսարանը անհամեմատ փառահեղ էր: Երասխը, որ չորս վերստ հեռաւորութեամբ հոսում է Արմախից, երբեմն անցնում էր բլրի ստորոտով, այնպէս որ այժմ էլ կարելի է տեսնել նորա չորացած հունը: Բարեկեցութիւնը աւելի բարգաւաճ էր, քան թէ այժմ. Մարգարապատի անապատը գուցէ չկար, գետերը աւելի առատ էին լրով, լըմուղիների ցանցը աւելի ընկարձակ, ոռոգումն աւելի առատ, բուսականութիւնը փարթամ և բնակիչները բազմաթիւ էին: Բերդի քարուքանդ պարիսպների վրայ կանգնած՝ այս բոլորը տեսնելով, մարդս աւազան մտածում է, թէ բնութիւնը ինքն է ստեղծել այդ տեղը մի նշանաւոր քաղաքական և կուլտուրական կենդրոնի համար:

Ի 1869 թ. Արմաւուրմ գտնուած առաջին քելեռաձեւ արձանագրութիւնների իւրանց վրայ զարձուցին ուսումնականների ուշադրութիւնը: Հայոց ուսումնականները յիշեալ արձանագրութիւնների մէջ յոյս ունէին գտնելու վաւերացումն Մ. Խորենացւոյ զբլուրների Արմախի հիւսիսեան և նորա 2000 տարի Քրիստոսից առաջ հիմնարկելոյ մասին. իսկ նոցա լեզուի մէջ՝ իւրեանց ազգի նախնական լեզուն: Ի 1880 թ. յառաջ քան Հնապիտական Հիւղերորդ ժողովի գումարուին, որ տեղի ունեցաւ 1884 թ. Թիֆլիզում, Մոսկովայի յանձնաժողովում, Մ. Էմինի առաջարկութեամբ, անօրինուած էր պեղումներ անել կարծեցեալ Արմախի տեղում: Նոյն տարուայ հոկտեմբեր ամսին, մի ամբողջ շաբաթ կոմս և կոմսուհի Ուլարովսկիները պեղումներ* կատարեցին բլրի վրայ օւ նորա շուրջը ամենայն ուղղութեամբ. սակայն մեծածախս ձեռնարկութեան արդա-

* Հանդուցեալ հիմնադիր Մոսկովայի կայսերական Հնագիտական ընկերութեան:

Իրան. Թարգ:

* Յիշեալ պեղումներին մասնակցում էր նաև հնագէտ Պ. Ա. Երիցեանը: Իրան. Թարգ:

սիբը միանգամայն բացասական էր: (Կոմս Ուվարովի մանրապատում Հաշիւը գետեղուած է հոյն ժողովի գործերում, էջ 439—449), ինչպէս շէնքերը, այնպէս և գետնի տակից ա գերեզմաններից հանած իրեղէնները, կոմս Ուվարովի բացատրութեամբ, վերաբերում են չորրորդ դարուն՝ Քրիստոսից յետոյ, ապա ուրեմն հասարակաց ոչինչ չունին կարծեցեալ հին բաղաբի հետ, որպիսին էր Արմաւիրը: Իսկ պեղումներից առաջ և յետոյ գտնուած քարերը բեւեռաձև արձանագրութիւններով հանդերձ՝ կոմսի կարծիքով, ծառայում էին իբրեւ նիւթեր յետին ժամանակի շինութեանց համար, և կարող էին բերուած լինել մի այլ տեղից, գուցէ և բլրի մօտակայքից:

Կոմս Ուվարովի եզրակացութիւնները, որ իւր ժամանակին զուրկ չէին իրական հիմունքներից, ներկայումս, երբ ունինք գիտութեան շնորհիւ ձեռք բերած նոր փաստեր, կարօտ են մեծ փոփոխութեան: Նա որոնում էր ոչ թէ պատմական Արմաւիր, որ յիշում էր քրիստոնէական դարերում, այլ այն առասպելականը, որ հանդէս է գալիս Մ. Խորենացւոյ Պատմութեան առաջին գլուխ ներում: Եթէ Մ. Խորենացւոյ մօտ պահպանուած աւանդութիւնները Արմաւիր մասին, զհաստատուեցան բառիս բուն նշանակութեամբ՝ կոմս Ուվարովի պեղումներից, այնուամենայնիւ պէտք է խոստովանել, որ այդ պեղումների շնորհիւ ակներե կերպով պարզվեցան ճշմարիտ պատմական ակնարկներ քաղաքի մասին, թէ Մ. Խորենացւոյ Պատմութեան և թէ բեւեռագիր արձանագրութիւնների մէջ: Մ. Խորենացւոյ միանգամայն պարզ է, որ Հայաստանի պատմութեան հայկական շրջանում, նախաքրիստոնէական դարերում, Արմաւիրը երկրորդական դեր էր կատարում, և միայն Քրիստոսի առաջին դարում նա մայրաքաղաք դարձաւ: Բայց յետոյ շուտով մոռացվեցաւ ու աւերեցաւ: Հասկանալի բան է, որ այստեղ մենք չպիտի որոնենք Հայոց կեանքի աւելի խոշոր հետքեր, քան թէ Արտաշատում, Փանոնում և և Հայաստանի այլ աւելի հին քաղաքներում: Ընդարձակ մայրաքաղաքի փոխանակ,

բայտ աւանդութեան Մ. Խորենացւոյ, կոմս Ուվարովը գտաւ միայն մի շափաւոր բերդի մնացորդը, որ նորա կարծիքով, յիշեցնում է Հայոց Դրոշ դարու շէնքերը: Ճիշդ այդպէս էլ պէտք է լինէր քրիստոնէական դարերի Արմաւիրը: Բայց այն նմանութիւնը, որ նա ունի Արտաշատի, Փանոնի և այլ շինութիւնների հետ, սահմանափակում է մի միայն շինեալուց նիւթերով և քարեր կոփելու եղանակով, որոնց մենք չենք կարող ընդունել իբրեւ բնորոշ յատկութիւն զուտ հայկական շինութեան: Հայոց թագաւորները քրիստոնէական դարերում կարող էին օգուտ քաղել նախընթաց դարերի հին շէնքերից և յարմարացնել նոցա իւրեանց արքունեաց համար: Բլուրը բաւական էր՝ նորա վրայ բերդ կանգնելու համար, գուցէ և տաճար գետեղելու. սակայն քաղաքը տաւրածուած էր տափարակի վրայ բլրի շուրս կողմում, և նորա մնացորդները չէին կարող պահպանուել այն տեղում, ուր քաղաքը գործ է ածում իբրեւ շինութեան նիւթ, և ուր շէնքերի մեծազոյն մասն ի հնուամի, ինչպէս և այժմ՝ հաւանական է կարծել, կառուցանվում էր հողից ու կահից:

Արդ՝ կոմս Ուվարովը իւր հետազոտութիւններով, բայտ մեզ, գտաւ այն, ինչ որ ինչպիսին էր, այսինքն՝ բուն հայկական Արմաւիրը քրիստոնէական դարերի. իսկ եթէ նա որոնում էր ահապին մայրաքաղաքի (հիմեալ 2000 տարի նախ քան Քրիստոսի ծն.) հետքերը, որ հազարաւոր դարերի բնութեացումը՝ Հայաստանի թագաւորների արքայանիստ էր, ուր անցեալի յիշատակաբանները աւելի հին և բազմաթիւ պիտի լինին, քան թէ ուրիշ տեղերում, եթէ միով բանիւ, նա որոնում էր առասպելական Արմաւիրը: Այն ժամանակ դարմանալի չէ բնու, որ հետազոտութիւնները չարդարացրին շափազանց ակնկալութիւնները:

Սակայն Արմաւիր անդրանիկ հետազոտողներն չէին կարող չհետեւել աւանդութեան ցուցումներին, քանի որ դա յատկացրած էր մի որոշեալ տեղին, իսկ այնտեղ գտած բեւեռագիր արձանագրութիւնների գիւտերը, անյայտ լեզուաւ, ակամայ հարկադրում էին

ռաուճեականներին շաղկապել այն՝ աւան-
դութեան հետ, և այդ արձանագրութիւնների
բնագիրներում որոնել Հայաստանի նախնա-
կան լեզուն 2000 տարի Գրիստոսից առաջ՝
հերկայ ժամանակս, արդարեւ պարզ է, որ
այդ աւանդութեան հիմն յենուած է հաս-
տատուն պատմական աստաօի վրայ որ մի
աղօտ յիշատակութիւն է սոյն վայրի պատ-
մութեան նախահայկական շրջանի մասին, և
միայն փաստերի պակասութիւնն, որ ձեռքի
տակ չունէր կոմս Ուլարովը, արգելեց ռուս
հնագիտին մի որոշ եզրակացութիւն անել
Արմաւրի ճշմարիտ անցելոյն մասին նախ
քան զՔրիստոս: Արդի արմաւիրեան բլրի
տեղում ու նորա շրջակայքում վերջին 33
տարուայ ընթացքում գտնուեցան տասներեւ-
կու բեռնագիր արձանագրութիւններ, որոնք
պատկանում են վանի Ը և Է դարերի նախ
քան զՔրիստոս թագաւորներին՝ Արդիշտի
ԱԷ, Սարգուրի ԲԷ և Ռուզա ԲԷ: Այն
ժամանակ, երբ կոմս Ուլարովը պեղումներ
էր կատարում, յայտնի էին միայն երեք ար-
ձանագրութիւն, նոցա բնագիրը վերծանուած
չէր և կոմսը կարծում էր, որ այդ քարե-
րը արձանագրութիւններով հանգերձ, իբրեւ
շինութեան նիւթ, փոխադրած էին մի ուրիշ
տեղից և Արմաւիրը պէտք է որոնել այլուր:
Այժմ կասկած չէ կարող լինել, որ 12 քա-
րերից առաջինը Արմաւրի շէնքերիցն են կամ
սերտ կապ ունին այդ շէնքերի հետ, մի և
նոյն նիւթից են, միասնեակ տաշուած են
Արմաւրի բլրի վրայ եղածների հետ, և ա-
ւանդում են քաղաքի, արքունեաց, մեհան-
ների, ջրմուղների կառուցման մասին մի
տեղում: Այդ տեղն արձանագրութիւնների
մէջ կոչում է Argistihinili, այսինքն՝ տե-
ղի բնակչութեան Արգիշտիի. իսկ ինչ որ մե-
րաբերում է բուն Արմաւիր կոչման, հա-
ւանական է, որ դա հայացրած ձեւն է մի
հին Ուրարտեան անուան, որ գտնուում է
Ասորեստանի արձանագրութիւնների մէջ: Ար-
մաւրի բլրի մօտ գտնուած բեռնագրերի հա-
մեմատաբար մեծ քանակութիւնը, նոցա բո-
վանգակութեան իմաստը ըմբռնելու և մի
խմբին դասելու հնարաւորութիւնը մեզ թոյլ
է տալիս մի այլ տեսակէտից նայել Արմա-

ւրի շէնքերի ծագման և նորա պատմական
կարեւորութեան վրայ, քան թէ (նայում էին)
նորա առաջին հետազոտողները: Ներայայումն
նոյն իսկ յիշատակարանների վրայ, որ գտաւ
և նկարագրեց կոմս Ուլարովը, մենք նկա-
տում ենք ճշգրիտ ակնարկներ Ուրարտեան
շրջանի մասին: Այստեղ մենք պիտի խօսենք
ճարտարապետական շինութիւնների վրայ
վասն զի գերեզմանների միջից հանած ի-
րեղէնների յետին ժամանակներից լինելն՝
անկասկածելի է: Կոմս Ուլարովը ճարտա-
րապետական շէնքերը վերագրում է Գ. դարուն
Քրիստոսից յետոյ, և նոցա վրայ տակի խոր
հնութեան նշաններ բնաւ չէ տեսնում: Բայց
այստեղ նախ և յառաջ հարկ է նկատել,
որ Արմաւրի շէնքերի վրայ մենք չենք հան-
դիպում յետին ժամանակի յոյն — հռոմէա-
կան ճարտարապետութեան լիովին ձեակերպ-
ուած ոճերին, ինչպէս Գաւնոյ յիշատակա-
րանների վրայ, որոնց հետ նա համեմա-
տում է սոցա. այստեղ չեն պահպանուել
ոչ պատեր, ոչ ճակատներ (շէնքերի), ոչ
սիւններ, այլ միայն շինութեան հիմն, որ հնա-
րաւորութիւն չէ տալիս որոշ գաղափար կազ-
մելու նորա բուն ոճի մասին:

Գարձաւ՝ ուշագրութեամբ զննելով ու հա-
մեմատելով բեռնագրերի քարերը շէնքերի քա-
րերի հետ, ես եկայ այն եզրակացութեան,
որ դոքա ամենայն մասամբ մի և նոյն են: Մա-
նաւանդ ուշագրութեան աննկու է այն հանգա-
մանը, որ արձանագրերի քարերը տաշում
էին այն բնորոշ խորանարդի ձեով, որպիսի են
Արմաւրի բոլոր ճարտարապետական քարերը,
նախ քան նոցա վրայ արձանագրութիւն փո-
րագրելն: Քարերից քառանկիւնի սալեր կեր-
տելն՝ փոքր բարձրութեամբ արտաքին երե-
ւից bossage-ի նման, գծերով քարի ե-
զերքներին, բնորոշ յատկութիւնն էր ոչ թէ
հայկական արձնուրի Դ՝-Է դարում Քրիս-
տոսի, ինչպէս կարծում է կոմս Ուլարովը,
այլ առաւել Ուրարտեան շրջանի ճարտարա-
պետութեան թիւ և Ը դարում նախ քան ըզ-
Քրիստոս: Այդ բանը ակնբեր է Սարգարա-
պատի քարի վրայ. բաւական է միայն մի
հայեացք ձգել նորա վրայ, համազօրելու հա-
մար, որ նորա կերտումն սովորական ձեով,

գծերով եղբերքին և բարձրութեամբ մէջ տեղում, ուր արձանագրի բնագիրն է յիշում, կարապետում էր արձանագրի փորագրելոյն: Արմաւրի քարերի տաշելու մի այլ եղանակը, որ նկատել է կոմս Ուլարովը, այն է՝ խոր բուրբաձե փոսեր քարերի կողերից մէկում, դարձեալ վկայում են ոչ յօգուտ հայկական, այլ Ուրարտեան ճարտարապետութեան: Մենք արդէն նկատեցինք, որ Դաշպուտունի քարը (N. 2) մի կողմից ունի այդպիսի փոսեր, որոնց նմանը մենք գտնում էինք արմաւրեան բլրի վրայ ընկած շատ անարձանագիր քարերի վրայ: Ուրովհետեւ արձանագիր քարերը, անկասկած, կայցնում էին պատերի վրայ, ուստի այնտեղ ամրացնելու համար երբեմն փոսեր էին շինում այդ քարերի միջև: Նոյնպիսի քարերի մեջ հանդիպեցանք Դաշպուտունի մօտ տերակների մէջ: Բաց ի Պորանից՝ կոմս Ուլարովը յիշում է, թէ ինչ եղանակով որմեր էին շինում, պատի արտաքին և ներքին կողմից գնելով կոփածոյ քարեր, իսկ միջում անտաշ մանր քարեր. և որմն կանգնելու այդ եղանակը նա վերագրում է դարձեալ Դ զարուն Գրիստունի: Սակայն այդ նշաններն չեն վկայում յօգուտ յիշեալ գարու. դա կարող էր կրկնուել ամենայն դարեւում զուտ ֆիզիքական կարեւորութիւնից: Մենք գիտենք, որ հնագոյն ժամանակներում, բարեխցիք ևս, որմն կանգնելու միջոցին, արտաքուստ գնում էին այլուած աղիւսներ, իսկ միջում մեծ քանակութեամբ չայրուածները: Շեշտելու է այստեղ և այն հանգամանքը, որ Արմաւրի աշտարակը բառանկիւնի ձե ունի, մինչդեռ յետին հայկական ժամանակների աշտարակները առ հասարակ բոլորածն են:

Այդ շինութեան նիւթերը, քարերի տաշումն և շինութեան ձևը Արմաւրում անպայման վկայում են յօգուտ նոցա Ուրարտեան ծագման: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ շէնքերի հին հիմունքը կարող էին գործածուել յետին ժամանակի շինութիւնների համար, հին ոճը պահպանուել երկար դարերի ընթացքում, մինչև վերջին ժամանակաշրջանը. բայց Արմաւրի շէնքերի վրայ տեսնել հայկական ճարտարապետու-

թեան անհերքելի և ակներև նշաններ, ինչպէս Գաւնիում, ոչինչ հիմն չկայ: Եթէ դրան յարելու լինիր այն հանգամանքը, որ ոչին տեղում գտնվեցան այնքան բազմաթիւ արձանագրութիւններ, Անգրկովկասում գրանցութեան մի ամբողջ կէտը, թէ նոցա բովանդակութիւնը ակնարկում է մի որոշ տեղի վրայ, այն ժամանակ փարատում են բոլոր կասկածները և բոլոր խոչնդոտներն ընդունելու, թէ արդի արմաւրեան բլուրը Ուրարտեան շրջանում դարդարուած էր շէնքերով, ունէր քաղաքական նշանակութիւն, իւր երկարատեւ պատմութիւնը, և թէ բնական գիր արձանագրութիւնների Argistihini-ն և Մ. Խորենացույ աւանդութեան Արմաւրին մի և նոյն քաղաքն են:

Ե. Յովսէփյան

Շառաշարելի



ՎԱՆԱՅ ԵՐԱՅԱԿԻ ԿԶԶԻՆԵՐԸ

ԱՂԹԱՄԱՐ

(Շար. յէջ 150)



ԲԱԳԻԿ Արծուրին այլ չի գանձարար իւր ծրագիրն ի պոքս գնելու: Ըստ հին կոնգրեսի կողմից, ուղեւոր յայնմ իւր իմասն և գիտատեսութիւնը՝ նա իւր աշխարհի բոլոր բնակաց, հրաման կը հանէ և առ ինքն կը կանչէ բոլոր աշխարհին եպիսկոպոսները, բաժանները, ազնաւականները և ուսմիկները, և կ'ըսէ. Միտքս զրեք եմ՝ կղզիս, մեր աշխարհի ամուր ասպատանարան մը դարձնել, որ ժամանակներ անցելէ վերջ, երբ թշնամիք յարձակին մեր սերնդից վրայ, փախչին և մտնեն յԱղթամար և ածորինաց ձեռքէն ազատին: Նոյն ժամանակ կղզին եկող բազմութեան միջէն, թագաւորի ապիւրհէն և Դուկաս ոմն վարդապետ և տէր Մովսէս արքեպիսկոպոս, և շատ մը զօրքեր՝ որ թա-